

**ՀՐԱԲԻԱԾԻՆ-ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՔԱ-
ՎԱՅՐԵՐ**, օգտակար հանածոների հան-
քավայրեր, որոնք ձևավորվել են հիմն և
ժամանակակից ծովերի ու օվկիանոսների
ավազաններում, միներալային նյութերի
ներթափանցման հետևանքով: Վերջին-
ներս, առաջանալով ծովերի հատակում,
կղզիներում ու մերձափնյա մասերում
գտնվող *հրաբուխների* ժայթքումների ժա-
մանակ, նստվածքազոյացման տեղերն են
թափանցում հիդրոթերմալ լուծույթների
ու տաք գազերի ձևով, ցամաքամերձ մա-
սերում հրաբխային նյութի քայքայման ու
լվացման ճանապարհով, հրաբխային մոխ-
րի մակերևույթի վրա՝ արսորբցված վի-
ճակում և այնուհետև՝ կուտակվում շեր-
տերի ու ելունդների տեսքով: Հ-ն. հ. են

երկաթի և մանգանի հանքանյութերի խո-
շոր շերտավոր կուտակները, որոնք կազմ-
ված են նշված մետաղների սիլիկատներից,
կարբոնատներից, օքսիդներից և հիդրօք-
սիդներից, ինչպես նաև հրաքարային հան-
քանյութերը, որոնց կազմի մեջ են մտնում
երկաթի, պղնձի, ցինկի, երբեմն՝ կապարի
սուլֆիդային միացություններ, բարիտ,
գիպս: Առանձին հետազոտողներ գտնում
են, որ Հ-ն.հ. են նաև բոքսիտների և ֆոս-
ֆորիտների մի շարք հանքավայրեր: Խա-
ղաղ, Ատլանտյան և Հնդկական օվկիանոս-
ների հատակում հանդիպող երկաթի և
մանգանի ելունդանման հանքանյութերը,
որոնք պարունակում են կոբալտի, նիկե-
լի, մոլիբդենի խառնուրդներ, հնարավոր
է, նույնպես ունեն հրաքիածին-նստված-
քային ծագում: